ՍԻՈՆ

ԺԸ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1944 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏ.-ՍԵՊՏ. 7-8-9

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ

ԱՄԵՆ. Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ



ՀԱՆԳԻՍՏ

ԱՄԵՆ. Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԱՐՔԵՊԻՍԿ. ՆՇԱՆԵԱՆԻ

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

1872 – 1944

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, խորունկ վշտով և անմբ-խիթար սուգով, կը յայտնէ մահը իր սիրեցեալ Հօր և պատ-ուական Պետին, Ամեն. Տ. Մեսրոպ Ս. Արքեպիսկ. Նշանեանի, որ հանգեաւ ի Տէր Յուլիսի 26, Ջորեքշաբթի կէսօրէ վերջ ժամը 12.30-ին։

Իրմով կ'անհետանայ Ս. Աթոռս երախտիքով լեցուցած բազմամեայ հաւատարիմ ծառայողը, մէկը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ բարի և քաջը Հովուապետներէն, և Հայ ժողո-վուրդի ազնուական ու շնորհալի զաւակներէն։

Անոր հնգամեայ Պատրիարքութեան զուգադիպեցան իրա-րու յաջորդող աղէտներ, իր մահը վերջինը եղաւ այդ դըժ-բախտութիւններուն, զրկելով ինչպէս զինք, այնպէս ալ Ս. Աթոռը իր բարի և հայրական տրամադրութիւններու արգա-սիքներէն, և այս պարագան աւելի քան տրտում կ'ընէ զմեզ, անմխիթար իր մահուանը մէջ։

Կ'ողբանք իր մահովը, կորուստը գորովալիր Հօր մը՝ որ տարիներ շարունակ իր սիրովը և քաղցրութեամբ, ինչպէս նաև լրջութեամբ թեւարկեց Ս. Յակոբեանց Միաբանութիւնը։

Կ'ողբանք Ս. Աթոռոյ ներքին շահերու հաւատարիմ և հոգեռանգ միաբանը, Հայ Դպրութեան պրպտող ու թափանցող մշակը և մեր իմացական և ազգային արժէքներու գուրգուրոտ յանձնանձողը։

Կ'ողբանք Հայ Սաղմոսի զինուորեալ Միաբանութեան գիտապետը, և Հայ Եկեղեցւոյ աւանդութեանց ինչպէս նաև Ս. Աթոռոյ կարգ ու սարքին նախանձաւոր հմուտը։

Կ'ողբանք մեզմէ յաւերժօրէն բաժնուող ամէնէն սիրուած ու յարգուած ազնիւ անձնաւորութիւնը և Ս. Աթոռոյ վաստակաբեկ մշակը, և անփոխարինելի այն արժէքները որոնք իր հետ գերեզման իջան։ Մեր վիշտն ու կսկիծը չեն ամոքուիր, ցորչափ իր մեկնումով գոյացած բացը կը մնայ։

Աղօթենք և մաղթենք որ Տէրը լոյսերու մէջ հանգչեցնէ իր քաղցր հոգին, և Հայաստանեայց սգաւոր Եկեղեցւոյ և բազմակարօտ ազգին շնորհէ նման հաւատարիմ և ծառայող հովուապետներ՝ ի սպաս և ի փառս Իր այրիացած Եկեղեցիին։

Օրհնեալ ըլլայ իր յիշատակը։